ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/7878/02/25 ք. Երևան
12 Օգոստոսի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միխեյանի, քննության առնելով ԵԴ2/7878/02/25 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«ԷյԷն Փրոդաքթս» ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչ Վարդան Հայրապետյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիա-կան դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում համայնքային ՀՄ-ի դեմ՝ հայցելով անվավեր ճանաչել ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/07 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 07.07.2025թ. թիվ 3 արձանագրությամբ Ա/Ձ Գևորգ Անդրեասյանին ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/07 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/07 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԷյԷն Փրոդաքթս» ՍՊ ընկերությանը:
Դատարանը 05.08.2025 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը

վերադարձ-նելու մասին:
Հայցվորը դատարանի որոշումը ստացել է 07.08.2025 թվականին և հայցադիմումը կրկին նույն օրը ներկայացրել է դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորը հայցել է անվավեր ճանաչել ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/07 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժո-ղովի 07.07.2025թ. թիվ 3 արձանագրությամբ Ա/Ձ Գևորգ Անդրեասյանին ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/07 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:
Դատարանն արձանագրում է, որ կրկին ներկայացված հայցադիմումով փոփոխվել է հայցի առարկան, ինչի արդյունքում Դատարանը հայցադիմումը գնահատում է նոր ներկա-յացված և արձանագրում, որ այն ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացա-կայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:
Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում համայնքային ՀՄ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 03.09.2025 թվականին:
2. Պատասխանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում համայնքային ՀՄ-ից պահանջել գնման գործըն-թացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատաս-խանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատար-վելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն

փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրա-պետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույց-ները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառ-ներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայաց-նելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2025.08.12 18:15:41 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am